



EU4Digital



# Վստահություն և անվտանգություն

EU4Digital-ն աջակցում է թվային վստահության և ինքնության ծառայությունների զարգացմանը, անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների փոխգործելիությանը, էլեկտրոնային կառավարմանը, ինչպես նաև կիբերանվտանգությանը՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում կենսական ենթակառուցվածքների դիմակայունության բարելավման համար:

Թվային վստահությունն ու կիբերանվտանգությունը թվային տնտեսության և հասարակության մյուս բոլոր հատվածներին անվտանգ եղանակով արժեք ապահովելու հնարավորություն են տալիս:

EU4Digital-ի վստահության և անվտանգության թիվի հիմնական նպատակներն են՝ վեր հանել թվային վստահության Էլոհամակարգի հնարավոր բացերը և ներկայացված առաջարկությունների միջոցով երկրներին հնարավորություն տալ դուրս գալ հաջորդ մակարդակ կամ պատրաստ լինել անդրսահմանային փոխճանաչմանը:



## Էլեկտրոնային նույնականացում (eID) և էլեկտրոնային ստորագրություն (eSignature)

Մշակել և սկսել eSignature-ի տեխնիկապես գործառնական անդրսահմանային պիլոտային ծրագրեր Ուկրաինայի, Մոլդովայի և Եստոնիայի միջև՝ ընդհանուր սկզբունքների և ձևաչափերի հիման վրա:

Վեր հանել կարգավորման և տեխնիկական ասպեկտներում առկա բացերն ու խոչընդոտները և մշակել գործնական առաջարկություններ պիլոտային երկրների համար:

Օգտագործել բաղած դասերը՝ տարածաշրջանային ընդհանուր ուղեցույցներ մշակելու համար՝ արևելյան գործընկեր երկրների ազգային գործողությունների ծրագրերում ներառելու նպատակով:

Ուկրաինայի, Մոլդովայի և Եստոնիայի միջև eSignature-ի տեխնիկապես գործառնական անդրսահմանային պիլոտային ծրագրերն այդ երկրների համար էլեկտրոնային նույնականացման և վստահության ծառայությունների միջավայրի ներդաշնակեցումը շարունակելու հիմք են ապահովել:



## Կիբերանվտանգություն

Գործընկեր երկրներում կիբերանվտանգության միջոցառումների վերլուծությունը վեր է հանել որոշակի խնդիրներ, այդ թվում՝ ռեսուրսների պակասը, անբավարար ֆինանսավորումը, հնացած օրենսդրությունը, ռիսկերի անբավարար գնահատումը և արտակարգ իրավիճակներում գործողության ծրագրերը:

Ուղեցույցները պարունակում են կիբերանվտանգության միջոցառումների մշակման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ:

Նպաստում է արևելյան գործընկեր երկրների միջև ավելի ուժեղ և դիմակայուն կիբեր տարածքի ձևավորմանը ու նվազեցնում ցանցային տեղեկատվական համակարգերի խափանման կամ ձախողման ռիսկը:

«EU4Digital Cyber» ծրագիրը նպաստում է գործընկեր երկրների կիբեր դիմակայունության ու քրեական արդարադատության արձագանքման բարելավմանը:



## Անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների փոխգործելիության շրջանակ

Անդրսահմանային էլեկտրոնային ծառայություններին արևելյան գործընկեր երկրների պատրաստության գնահատում. կազմակերպչական և տեխնիկական խոչընդոտների բացահայտում և վերացում, փոխգործելիության հիմնարար սկզբունքների սահմանում, օտարերկրացիների համար էլեկտրոնային ծառայությունների հասանելիություն և թվային գործիքների առկայություն:

Առանձին երկրների համար առաջարկությունների պատրաստում, որոնք թույլ կտան օգտվել էլեկտրոնային ծառայությունների անդրսահմանային օգտագործման հնարավորություններից:

Տարածաշրջանային շրջանակի՝ որպես արագացված թվային գործիքների կիրառմամբ փոխգործելի անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների զարգացման ներդաշնակեցված մոտեցման ներդրում:



## Էլեկտրոնային կառավարում

Մշակվել է էլեկտրոնային կառավարման շրջանակ՝ պետական կառավարման զարգացման աջակցելու համար:

Շրջանակի հենասյուներն էլեկտրոնային կառավարման հիմքում ընկած պայմաններն են և կենտրոնանում են պատճառահետևանքային հաջորդականության վրա, այսինքն՝ ինչպիսի հիմքեր պետք է հաստատվեն, որպեսզի հաջողություն արձանագրվի էլեկտրոնային կառավարման մյուս ասպեկտներում:

Էլեկտրոնային կառավարման շրջանակը հիմք կապահովի կառավարության թվային հասունության ներկա վիճակը գնահատելու և դեռևս չկայացած կամ բարելավման կարիք ունեցող խնդրահարույց ոլորտները բացահայտելու համար: Ավելի, այն հասարակության վրա անմիջական ազդեցությամբ կնպաստի արդյունքների հասնելուն՝ ունեցող արդյունքներին. արդյունավետություն պետական հատվածում, թվային ծառայությունների, տվյալների վրա հիմնված որոշումների և էլեկտրոնային հասարակությանը մասնակցության ոլորտներում:

# Թվային տնտեսության ոլորտում վստահությունն ու անվտանգությունը զարգացնելով՝ ԵՄ-ն ուղարկում է էլեկտրոնային գործարքները բիզնեսների և քաղաքացիների համար՝ դրանք դարձնելով ավելի ապահով, ավելի արագ և ավելի մատչելի, ինչպես նաև նպաստում է կենսական թվային ենթակառուցվածքների դիմակայունությանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցությունը, էներգետիկան, տրանսպորտը կամ բանկային գործը, ինչը հիմք է հանդիսանում ավելի ուժեղ, ավելի դիմամիկ տնտեսության և սպառողների վստահության աճի համար:



Թվային վստահության և կիբերանվտանգության գործողությունները նպատակ ունեն ապացուցել, որ ժամանակակից 21-րդ դարի հասարակությունում գոյություն ունեն գործընթացներ, գործիքներ և տեխնոլոգիաներ, որոնք երկու երկրներին կարող են թույլ տալ փոխճանաչել միմյանց թվային վստահության ծառայությունները՝ նպաստելով թվային տնտեսության աճին:

Թվային վստահության ծառայությունները և թվային նույնականացման ծառայությունները ժամանակակից հասարակություններին օգնում են արագացնել սոցիալական փոխազդեցությունները և ամրապնդել տարբեր աշխարհագրական տարածքների միջև վստահությունը՝ միաժամանակ անհատներին և ընկերություններին օգնելով ավելի ցածր գործառնական ծախսերով արժեք ապահովելու հարցում:



Էլեկտրոնային կառավարման գործողությունների նպատակն է զնահատել կառավարության թվային հասունության ներկա վիճակը և բացահայտել դեռևս չկայացած կամ բարելավման կարիք ունեցող հիմնարար ոլորտները:

Անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների փոխգործելիության շրջանակը կտրամադրի թվային գործիքների կիրառմամբ արագացված ազգային մակարդակով փոխգործելի անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների մշակման և ներդաշնակեցված մոտեցման ղեկավար սկզբունքներ և գործնական առաջարկություններ:



## EU4Digital՝ վստահություն և անվտանգություն. հիմնական փաստեր



EU4Digital-ը տեխնիկապես գործառնական անդրսահմանային eSignature պիլոտային ծրագրեր է սկսել Ուկրաինայի, Մոլդովայի և Եստոնիայի միջև: eSignature պիլոտային ծրագրերը այդ երկրների համար ԱԳ և ԵՄ երկրներում էլեկտրոնային նույնականացման և վստահության ծառայությունների միջավայրի ներդաշնակեցումը շարունակելու հիմք են ապահովել:

Արևելյան գործընկեր երկրներին մեծ մասն ընդունել են վստահության և էլեկտրոնային նույնականացման ծառայությունների վերաբերյալ սեփական իրավակարգավորող շրջանակները՝ հիմնված ազգային կարիքների և պահանջների վրա:



Արևելյան գործընկեր երկրներում բազմաթիվ պետական ծառայություններ ավելի ու ավելի հասանելի են դառնում առցանց ձևաչափով, սակայն անհրաժեշտ է ներդաշնակեցված տարածաշրջանային մոտեցում՝ թվային գործիքների կիրառման միջոցով արագացված փոխգործելի և անդրսահմանային էլեկտրոնային ծառայությունների ապահովման համար:

Արևելյան գործընկեր երկրները կիբերանվտանգության ոլորտում ցուցաբերում են հասունության տարբեր մակարդակներ. որոշները դեռևս գտնվում են կիբերանվտանգության առաջին՝ ազգային ռազմավարության մշակման, իսկ մյուսները՝ դրանք երկրորդ անգամ վերանայելու և թարմացնելու գործընթացում, որոշները ձևավորել են ազգային և ոլորտային համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման խմբեր (CERT), մինչդեռ մյուսները դեռևս գտնվում են դրանց ստեղծման գործընթացում:



Թվային առաջնահերթությունները և թվային ներդրումները ավանդաբար կենտրոնացած են եղել առավել տեսանելի և ավելի հեշտ մատուցվող «ճակատային» լուծումների վրա՝ ինտերնետի հասանելիություն, ծառայություններ, պորտալներ, որոնք հեշտ է տեսնել որպես արդյունք: Միևնույն ժամանակ հանրության համար ավելի քիչ տեսանելի որոշ հիմնարար ոլորտներ, ինչպիսիք են տվյալների թվայնացումը, փոխգործելիությունը, էլեկտրոնային ինքնությունը, հասանելիությունը, հաճախ ավելի քիչ ուշադրության են արժանանում՝ «մահվան հովիտ» ստեղծելով ռազմավարական առաջնահերթությունների և դրանց իրականացման միջև: Ռազմավարական, երկարաժամկետ և համակարգված նախաձեռնություններին աջակցելու համար անհրաժեշտ է բացահայտել էլեկտրոնային կառավարման առանցքային հիմունքները և դրանք օգտագործել արդյունավետ թվային փոխակերպման և հանրային հատվածի բարեփոխումների հիմքեր ստեղծելու համար, ինչպես որ դա արեցին Բալթյան և Սկանդինավյան երկրները՝ լավագույն արդյունքների հասնելու համար: EU4Digital-ը էլեկտրոնային կառավարման շրջանակը մշակել է պետական կառավարման բարեփոխումներին նպաստող էլեկտրոնային կառավարման անհրաժեշտ զարգացումներին ուղղություն հարորդելու համար:



Ֆինանսավորվում է Եվրոպական միություն կողմից

<https://eufordigital.eu/thematic-area/trust-and-security>